Արձանագրություն

Կարմիրգյուղ բնակավայրի վարչական տարածքում երկրաբանական հետախուզական աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ

28.04.2025թ.

Կարմիրգյուղ բնակավայր

Գավառ համայնքի Կարմիրգյուղ բնակավայրում տեղի ունեցավ հանրային լսում Կարմիրգյուղ բնակավայրի վարչական տարածքում Գավառի «ՃՇՇ ԲԲԸ»-ի կողմից երկրաբանական-հետախուզական աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ հանրային լսում:

Հանրային լսմանը մասնակցում էին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, Գավառի համայնքապետարանի, նախաձեռնող և իրականացնող կազմակերպության ներկայացուցիչներ, բնակիչներ: /մասնակիցների ցանկը կցվում է/

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչ Շահեն Բալաբեկյանը և Գավառի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արծրուն Ղուրշուդյանը իրենց խոսքերում անդրադարձան իրականացվելիք ծրագրի բնապահպանական և սոցիալական բաղադրիչներին, Կարմիրգյուղի վարչական ղեկավար Արայիկ Հոդաբաշյանն էլ նշեց, որ բնակավայրում բնակիչները դրական են վերաբերվում ծրագրի իրականացմանը:

Հանրային լսմանը ներկայացվեցին իրականացվող աշխատանքները:

Մասնակիցները կազմակերպության ներկայացուցիչներին ուղղեցին իրենց հետաքրքրող հարցերը և ստացան պատասխաններ:

Հանրային լսումը վարեց՝

Գավառի «ՃՇՇ ԲԲԸ»-ի տնօրեն Ժորա Խաչատրյանը՝

Արձանագրեց՝ Գավառ համայնքի ղեկավարի

օգնական՝ Արծրուն Դվոյանը՝